

## ՀԱՅՆ Ի ԳԵՐՈՒԹԵԱՆ.

— « Ե. Հ. Համբերից ես անձանձիր  
Եւ զայս միայն խորհեցայց.

— « Ե՞րբ յարիցէ Տէր վրէժինդիր  
Սզզին և ինձ առնել այց » :

Դու ի վանդակ, ես ի կապտան  
Կատ գերեցաք մեք, թըռչնակ,  
Դու սըղայիր քոյդ շըւառ կեանս,  
Ես՝ հայրեննեացս ըզվիճակ:  
Եւ երկոքեանս յոյժ տարփացեալ  
Յազատութիւն և ի սէր՝  
Յանդ զայսոսիկ ի սիրտ յուղեալ  
Մեք ողբայաք զօր զիշեր:  
Ո՞չ, դու թըռւեաք . . . յազատութեան  
Երդ սըլմանաս երկնածեմ.  
Դսկ ի բանտի ես հէդ միայն  
Կապեալ ձեռամք զուր հէծեմ:  
Թըռչնակ սիրոյ, դու յանտառին  
Գեղգեղեսցես քոյդ դաշնակ.  
Երձակեցից ես թախծազին  
Թառաջս երգոց փոխանակ:  
Ենդ շինեացես ըզեոյն փափկիկ,  
Չափուցդ ընդ տես բերկրեացիս.  
Եստ ես զիցեմ անաշխարհիկ  
Լըքեալ ըզտուն, սիրելիս:

Երթ արդ ողջամբ և վայելեան  
Յերջանկութեանդ, զոր զըտեր,  
Մի մոռասցիս, և զիս երգեան,  
Օսյան որ յաւոցդ էր ընկեր:

Ե. Հ. Համբերից ես անձանձիր  
Եւ զայս միայն խորհեցայց.

— « Ե՞րբ յարիցէ Տէր վրէժինդիր  
Սզզին և ինձ առնել այց » . . .

ԱՏԵՓԱՆՈՍ ՄԱԿԻԱՍՆԱՆ.

## ԱԶԳԱՅԻՆ

## Ի Վ Ի Է Ն Ա Յ Ի Ն

Վիշնավի Հայեր. — Եկեղեցւոյ խնդիր. — Հայերէն զրբեր եւ պիտնական Պ. Միլէր Հայտպէտ. — Միլի-  
թարեան վանք:

Նախընթաց նամակներիցս մէկի մէջ  
առած էի որ՝ չկայ Արեւմտեան Եւրո-  
պայում փոքր ի շատէ նշանաւոր քա-  
ղաք, ուր չկինէին Հայերը կամ չկինէր  
որ եւ իցէ յիշատակ Հայոց ազգի մա-  
սին: Այդպիսի քաղաքներից մէկն է եւ  
Աւստրիայի մայրաքաղաք Վիէննա: Հա-  
յոց վաճառականները արդէն վաղուց  
շարունակում են իւրեանց առեւտրա-  
կան յարաբերութիւնները սորա հետ:  
Հայոց երիտասարդները վաղուց սկսել  
են բարձրագոյն գիտութիւններ որո-  
նել սորա Համալսարանի մէջ:

Վիէննայի մէջ կան երկու տեսակ  
Հայեր՝ մշտաբնակ եւ ժամանակաւոր.  
առաջինքը այժմ հազիւ 25—30 հոգի  
են, բայց ներկայ պատերազմից առաջ  
աւելի շատ են եղած. սոքա ըստ մեծի  
մասին երիտասարդ կամ չամուսնացած  
մարդիկ են, բայց կան եւ երեք — չորս  
ընտանիք, որոց կէսը տարաբախտաբար  
Գերմանացու հիք են: Այս մշտաբնակ  
Հայերը ունին կանոնաւոր գրասենեակ-  
ներ (բիրօ) եւ ընդարձակ առուտուր են  
վարում. մեծագոյն մասը ապրանք է  
ուղարկում Տաճկաստան եւ այն տեղից  
ստանում է հում մթերքներ. իսկ փոք-  
րագոյն մասը յարաբերութիւն ունի  
Ռուսաստանի հետ, մանաւանդ. Թիֆլի-

զի, Ախալցխայի, Աղեքսանդրապօլու եւ Երեւանի հետ Սոցա մեծագոյն մասը Տաճկաստանցի են, կան նաև Վալաքիայից, եւ շատ քիչ Ռուսաստանից, բայց ամենքը շատ գեղեցիկ խոռում են Հայերէն կ. Պօլսոյ ոճով։ Ժամանակառը Հայերը ընդհակառակն մնում են Վիէննայում կարճ միջոցով, դոքագալիս են այս տեղ Տաճկաստանից եւ Ռուսաստանից ապրանք գնելու եւ իւրեանց տեղերը ուղարկելու համար, դոցագառակարգին պատկանում են եւ այն բաւական բազմաթիւ ճանապարհորդ Հայեր մինչեւ անգամ ընտանիքներ, որք ամառը գնալով Գերմանիայի հանքային ջրերի վերայ՝ անցնում են Վիէննայով։

Վիէննայի մշտաբնակ Հայերը լի են աղնիւ եւ ազգասիրական զգացմունքներով, պակաս չէ նոցա մէջ եւ կրօնական բարեպաշտութիւնը, բայց տարաբախտաբար զուրկ են Ա. Հաղորդութիւնից եւ ժամասացութիւնից, վասն զի չկայ այս տեղ ոչ եկեղեցի կամ ազօթատուն եւ ոչ մշտական քահանայ Անցեալ տարի պատահմամբ եկած է այստեղ Երուսաղեմի միաբան Եղեկիէլ վարդապետ Արաբեան յատկապէս տկարութեան պատճառով։ Այս աղնիւ եւ եռանդոտ Երիտասարդ Վարդապետը սկսել է յորդորել տեղւոյս Հայազնժողովուրդը մի ազօթատուն հաստատել Հայերը համակրել են այդ մտքին եւ ինքեանք եւս սկսել են աշխատել, բայց մեծ դժուարութիւնների հանդիսիկ են Աւստրիոյ պետութեան եւ մանաւանդկաթոլիկ հոգեւոր իշխանութեան կող-

մից։ Եղեկիէլ Վարդապետը՝ բաւական առողջութիւն գտնելով իւր աչքի տկարութեան՝ կարծեմ պիտի շուտով վերադառնայ Երուսաղէմ, բայց ինչպէս նկատեցի մի քանի պատուաւոր անձանց խօսքերից՝ նոքա միտք ունին անպատճառ գլուխ բերել այս գործը։

Կամենալով միշտ ծանօթ լինել աղգային գործերի հետ՝ Վիէննայի Հայերը որոշել են միշտ գումարուիլ երկու որոշ սրճանոցի մէջ, ուր եւ ստանում են կ. Պօլսոյ Մատիս թերթը։ — այս կողմից նոքա կարող էին աղնիւ օրինակ լինել Փարիզի եւ ուրիշ շատ քաղաքների Հայերին։

Աս ծանօթացայ Վիէննայում երեւելի դոքտոր Ֆրիդրիխ Միւլէրի հետ առ անգամ է գիտութեանց ձեմարանի եւ ուսուցիչ կայսերական Համալսարանի մէջ։ այս համբաւաւոր արեւելագետը, որ գասախօսութիւն է անում Սանսկրիտ եւ Զէնգ լեզուների, գիտենոյնպէս եւ Հայերէն լեզուն։ Մի ամբողջ ժամանակաւ նա ինձ հետ գրոց լեզուով եւ գեղեցիկ ոճով այնպէս հեշտ եւ աղատ, ինչպէս մենք խօսում ենք աշխարհաբարը։ Պ. Միւլէրի Հայերէն խօսակցութիւնը անհամեմատ աւելի յաջողակ էր՝ քան թէ Փարիզի Հայագէտ Պ. Դիւլորէի խօսակցութիւնը։ Դիտնական Գերմանացին ցուցեց ինձ կայսերական մատենագարանի մէջ 25ի չափ Հայկական ձեռագիրներ, ըստ մեծի մասին կրօնական բովանդակութեամբ։ միայն մէկը՝ փոքրագիր Մաշտոց՝ գեղեցիկ վայելքագրութիւն ունէր եւ մի քանի պատկերներ, իսկ միւսնե-

րը թէեւ մագտպաթի վերայ՝ չէին ընտափը օրինակներ։ Պ. Միւլէրը ինձ ասաց որ նոյն մատենագարանի մէջ կան նաեւ 30ի չափ տակած գրքեր, որոց մէջ երեւելի են Ամստերդամ՝ տպան Աստուածաշունչ եւ Առլաւ Խորենացւոյ տպատմութիւնը։ Խօսակցութեան մէջ են նկատեցի որ՝ այս Հայագէտ գիտնականը շատ լաւ ծանօթէ էր Հայկական արպագրութեան հետ եւ մի առ մի յիշեց թէ ինչ գրքեր տպուել են վերջին ժամանակներս ի Ա. Եջմիածին, Մոսկուա, Պետրովուրգ, եւին։ Նա առանձին հետաքրքրութեամբ խօսում էր Առաքել պատմագրի պատմութեան վերայ եւ ցաւակցութիւն յայտնեց որ չէ կարողանում գանել գորա տպածը։ Պ. Միւլէրը ինձ ասաց՝ որ ինքն եւս ունի իւր սեփական 10ի չափ Հայերէն ձեռագիրներ։ Նա մեծ գովասանութեամբ խօսեցաւ Հայոց մատենագրութեան եւ լեզուի հարստութեան եւ գիտնական արժանաւորութեանց վերայ։

Վիէննայում կայ, ինչպէս յայտնի է, եւ մի Հայ - կաթոլիկ վանք Միւլէրիան միաբանութեան։ Սա առաջ հաստատուած էր Տրիեստ քաղաքում, բայց նապոլէոն Ա. աքսորեց սոցա այն տեղից 1812 թ։ Ա.անքը ունի մի ընդարձակ եւ գեղեցիկ եկեղեցի փողոցի վերայ, բայց ոչ իւր արտաքին ճարտարապետութեամբ եւ ոչ ներքին տեսաբանվ չէ յիշեցնում ոչինչ հայութիւն։ Սորա մէջ չկայ ոչ մի պատկեր կամ արձանագրութիւն Հայկական. սեղանները, պատկերները, արձանները, նըստաբանները, բոլորը կաթոլիքական են։

Ես ներկայ էի կիւրակի օր ս. պատարագին, ժամարարի զգեստը նոյնալէս կաթոլիքական էր եւ ժամասցութիւնը նէւ, եթէ չիմանայի որ՝ այդ հայ - կաթոլիկաց եկեղեցի էր, պէտք է կարծէի որ բուն լատինական եկեղեցւոյ մէջ էի ժամարարին սպասաւորումէր միայն մի պաշտօնեայ առանց շապկի՝ վանական շորով, իսկ մնացած միաբանութիւնից ոչ ոք ներկայ չէր։ Յետոյ միաբաններից մէկը ինձ բացատրեց որ նոքա առհասարակ եկեղեցի չեն ենում այլ ունին իւրեանց համար առանձին ազօթատուն, որը ինձ չցոյց տուին՝ թէեւ ես ինգրեցի։

Եկեղեցին միտորած է վանքի հետ մի ընդարձակ սենեակով, որ աւանդատուն է, ևս մտայ այդտեղ եւ խնդրեցի մէկ վարդապետից որ ինձ զոյց տան վանքը։ Նա ինձ տարաւ մի փոքր սենեակ եւ խնդրեց սպասել, սպասեցի ամբողջէսժամ։ Աննեակը ըստ երեւութիւն ընդունարան էր, մի փոքր ժախտ, մի փոքրիկ սեղան, չորս աթոռ, մի քանի պատկերներ, ահա ըոլոր կահ - կարասիքը։ Պարձեալ ոչինչ հայութեան նշան։ Պատկերներից մէկը ներկայացնում էր բալոր պապերի փոքրադիր պատկերները։ Սեղանի վերայ գրած էին մի քանի լրագիրներ՝ Գերմաներէն լեզուով։ Միւս փոքր սեղանի վերայ մի տեսակ հոգացութեամբ փաթաթած էր կանաչ մաշուղի մէջ մի բան։ Հետաքրքրութիւնից բաց արի այդ խորհրդաւոր բանը, եւ երեւակայեցէք զարմանքս, այդ էր Կարպէտի կամ Շահամաս ասած խաղագործիքը։ Աւրեւն միսիթարեանք ոչ

միայն լնքեանք զբաղվում են այդ խաղով, այլ եւ հիւրերին միջաց են տալի զբաղութեանով՝ երկար սպասելու տաղտկութիւնը չզգալու համար:

Վանքը ներկայացնում է ընդարձակ քառակուսի քարաշեն տուն, որոյ երկու կողմին ներքնայարկը բաղկացած է կրպակներից, որոց վարձը է վանքի գլխաւոր արդիւնքը: Մի փոքրիկ փողոց որի վերայ նայում է վանքի գլխաւոր կողմը, կոչվում է Գերմաններէն: Մինչ նարեանց ժողոց թէ տունը եւ թէ եկեղեցին բոլորովին նոր շինութիւններ են եւ աւարտած են կարծեմ 1874 թուին: Վանքը ունի եւ փոքր պարտէզ:

Մի երիտասարդ եւ քաղցրաբարոյ վարդապետ ինձ առաջնորդեց վանքը տիսնելու, սա էր հիւրընկալ Հայր Աւետիք Գոյալեան, Վալաքիայի ծընունդ եւ Լուսաւորչական ծնողների զաւակ, բայց վանքի մէջ կաթոլիկ դարձած: Տպած գրքերի գրադարանը բաւական ընդարձակ է եւ հարուստ, բայց բայց գրքերը գեռեւ անկանոն կերպով շարած կամ թափթիած են՝ շինութեան նորութեան պատճառով, Հայերէն գրքերի մասը աւելի քաղմաթիւ չէր: Մի ուրիշ սենեակի մէջ տեսայ երեք փոքր գղրոցի մէջ ամփոփած 50—60ի չափ Հայերէն ձեռագիրներ, ըստ մեծի մասին կրօնական բովանդակութեամբ: Առանձին սենեակ լի էր գերմաններէն վաճառելի գրքերով: Վանքը ունի բաւական հարուստ թանգարան հանքերի, գրամների, նկարների, չորացած թըռչունների, եւլն: Մի այլ սենեակի մէջ տեսայ մի քանի փիղեքական գործիք-

ներ, իսկ միւս սենեակի մէջ մի քանի լիտր կարմիր սոխ գետնի վերաց փուած: Դպրոցը նոյնպէս խեղճ գրութիւն տնի: սա բաղկացած է միոյն մի սենեակից, սեղանները եւ նստարաններ, ըլ անձանօթե են մանկավարժական պարմաններին: Այժմ կան միայն 11 աշակերտ երեք գառակարգի բաժանած շրբերը նոյն են, բայց գօտին որոշ բարձր գառակարգը ունէր սեւ կաշու գօտիկ, իսկ միւսները կարմիր շալ գօտի վարժապետի խօսքին նայելով՝ աշակերտները սովորում են համարեա բոլոր կրօնական եւ արտաքին գիտութիւնները եւ շատ լեզուներ: Բայց բոլոր վարժապետները նոյն վանքի միաբաններն են: Միջոցը չներեց ինձ փոքր ի շատէ ծանօթանալ աշակերտների յառաջադիմութեան եւ զարգացման հետ: Բայց նոցա հիւանդու, գեղին, նիշար, մեռած երեսները շատ բան չեն խօստանում:

Վանքը ունի շատ ընդարձակ եւ բարեկարգ տպարան, բայց արդէն երկու տարի է որ դա վաճառուած է ուրիշին: Եւ մէրը վճարում է միայն տան վարձ: — Ահո ձեզ եւ ազգասիրական գործունէութիւն:

Ես տեսութիւն ունեցայ Աբբահօր եւ մի քանի միաբանների հետ: Խօսքը ինքն ըստ ինքեան բացուեցաւ կրօնական առարկայի վերայ եւ ես զարմացած մնացի, թէ որ աստիճան ծայրայեղ է եղել սոցա կրօնասոլութիւնը: Այսպահոյ Հայութական հայութի եկեղեցու չկայ հոգեցոյ Քրիստոն: — ահա նոցա նշանաբանը, նոցա կարծիքով Հայոց Եկեղեցյին միան-

գամայն մոլորուած է եւ աւելի ստոր է  
քան թէ յունական եկեղեցին. մինչեւ  
Հայոց եկեղեցին չխափանէ իւր կաթու-  
ղիկոսութիւնը եւ լրնդունէ պապի իշտ  
խանութիւնը<sup>(\*)</sup> — չէ կարող հոգուոյ  
փրկութիւն տալ իւր ժողովրդին։ Եւահա  
այսպիսի բառքս արտասանող մարդիկ  
մի քանի բոպէից յետոյ ինձ հաւատա-  
ցնում էին թէ իւրեանց բոլոր կեանքը  
նուիրած են ազգին եւ ուրիշ զգաց-  
մունք չունին բաց ի ազգասիրութեան  
զգացմունքից։ Որպիսի զարմանալինմա-  
նութիւն Արէննայի եւ Վենետիկի Մը-  
խիթարեանց մէջ, նոյն ոգի, նոյն ուզ-  
գութիւն, նոյն կրօնամոլութիւն, նոյն  
յամառութիւն. ահա այստեղ է երե-  
ւում այն սոսկալի ազգեցութիւնը, որը  
գործում է ճիզուիտականութիւնը ա-  
մենայն տեղ՝ ուր ուրեք հասցնում է  
իւր գործունէութիւնը։ Բայց Վենետի-  
կի Մխիթարեանք գոնեա աւելի քաղա-  
քավարի են նոյն միտքը յայտնող ոճե-  
րի մէջ։ Նոցա եկեղեցին, նոցա ժամա-  
սացութիւնը, նոցա զգեստաւորութիւ-  
նը, նոցա կենցաղավարութիւնը շատ  
բանով յիշեցնում է տակաւին Հայկա-  
կան յատկութիւն, մինչդեռ Արէննա-  
յի Մխիթարեանցների մէջ բոլորովին  
անհետացած տեսայ այդ։ Եւ առհա-  
սարակ՝ հարստութեան, բարեկարգու-  
թեան, գիտնական հաստատութեանց  
եւ այլ շատ բաների կողմից՝ Վենետիկի  
վանքը անհամեմատ գերազանց է Ար-  
էննայի վանքից։

Վ. Վ. Բ.

Խ. 8-22. 1878 թ.

Պ. Հենրի. Երևան Կողմանյան արք

ՆՈՒԷՐ ԱՌԱԲԵԼԵՍՆՑԻ.

Գանձակեցի հանգուցեալ Խանում  
Առաքելեանց բարեպաշտ այրին՝ ըստ  
յորդորանաց բարեկրօն Քրիգոր Քա-  
հանայի Թումանեանց՝ ինչպէս Գանձա-  
կու Հայոց գպրոցաց եւ այլոց նուէրներ  
կտակած էր, նոյնպէս յանուն եւ ի  
նպաստ Ս. Գէորգէան Ճեմարանի Մայր  
Աթոռոյս Ճ հարէր (100) ուր. նուէր  
կտակած լինելով, հանգուցելոյն որդի  
Մեծարգոյ Պ. Աքրահամ Առաքելեանց  
կտարեց իւր մօր կտակը, որոյ համար  
եւ մեր շնորհակութիւնը կյայտնեմք՝  
աղաչելով զԱստուած՝ շնորհել հան-  
գուցեալ Խանում Առաքելեանցի հո-  
գւոյն հանգիստ եւ երկնից սուրբ Ար-  
քայութիւնը։

Որչափ կրին մեծ օգուտներ կքա-  
ղուին մեր համայն ազգային բարենպա-  
տակ հաստատութիւններէն՝ եթէ Ա-  
ռաքելեանցի նման ամեն ձեռնհաս մեր  
եղբարք եւ քորք սիրեն նուէրներ կտա-  
կել ի նպաստ Մայր Աթոռոյս՝ Հայոց  
Ազգային Հոգեւոր գպրոցաց՝ եկեղե-  
ցեաց եւ այլոց՝ միանգամայն բարեաց  
յիշատակներով զանձինս անմահացնե-  
լով։